1. Կգոհանամ Քեզնից ամբողջ սրտովս.
աստվածների առջև Քեզ սաղմոս կասեմ:
2. Երկրպագություն կանեմ Քո սուրբ

«Խոսի՛ր Խոսքը

ՆՈՐ
ԹԱՐՄԱՑՎԱԾ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ները կգոհանան Քեզնից, որ Քո բերանի
խոսքերը լսեցին: 5. Եվ Տիրոջ ճանա-
պարհներում օրհնություն կասեն, թե Տի-
րոջ փառքը մեծ է: 6. Որովհետև Տերը
բարձր է և տեսնում է ցածը, և Նա հեռ-
վից ճանաչում է բարձրամիտին: 7. Եթե
նեղության մեջ գնամ, կապրեցնես ինձ,
իմ թշնամիների բարկության վրա Քո ձեռ-

ՄԵՐԻԼԻՆ ՀԻՔԻ ԵՎ ՍԱՌԱ ԲՈՈՒԼԻՆԳ

թյունը հավիտյան է. Քո ձեռքի գործերը
երեսիցդ մի՛ ձգիր:

Խոսի՛ր Խոսքը

ՆՈՐ
ԹԱՐՄԱՑՎԱԾ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐԻԼԻՆ ՀԻՔԻ ԵՎ ՍԱՌԱ ԲՈՌԻԼԻՆԳ

Marilyn Hickey Ministries
P.O. Box 6598 • Englewood, CO 80155-6598

Եթե այլ կերպ նշված չէ, բոլոր աստվածաշնչյան մեջբերումներն Աստվածաշնչի «Արարատ» թարգմանությունից են:

ISBN 978-1-938696-93-0

Վերանայված հրատարակություն, 2013թ.
Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում
Հեղինակային իրավունքները՝
© 1982թ., 1983թ., 2013թ.
Մերիլին Հիքի և Սառա Բոուլինգ
Մերիլին Հիքիի ծառայություն
Բոլոր իրավունքները պաշտպանված են
Թարգմանված է անգլերենից, 2017 թ.

Խոսի՛ր Խոսքը

Մերիլին Հիքի

Ձեր լեզուն՝ ձեր հզորագույն զենքը և ուժն է: Առակաց գիրքը պնդում է, որ լեզուն կյանքի և մահվան զորություն ունի: Հակոբոս 3-րդ գլխում գրված է, որ դուք կարող եք վերահսկել ձեր ամբողջ մարմինը լեզու կոչված փոքրիկ անդամով: Նման ղեկի, որն ուղղորդում է նավը, և ձիու բերանում դրված սանձի, որը ճիշտ ուղղությամբ է տանում նրան՝ ձեր լեզուն կարող է տանել ձեր մտքերը, զգացմունքները և մարմինը բարգավաճման և հաջողության ճանապարհով, և արձակել անասելի ուժ՝ բարին գործելու համար:

Մյուս կողմից, ձեր լեզուն կարող է վնաս հասցնել ձեր մարմնին, մտքերին և զգացմունքներին: Սխալ խոսքերը կարող են կործանել մեզ, քանի որ սաղմոսերգուն գրում է, որ դրանք սուր խոցոտելու պես են: Ձեր խոսքերի պատճառով դուք կրակով վառում եք գոյության ընթացքը, որովհետև դժոխքը գործում է ձեր խոսքերի հիման վրա: Եվան պետք է սխալ խոսքեր ասեր, որ սատանան կարողանար գործել: Դժոխքը կարող է գործել միայն ձեր խոսքերի հիման վրա. այնպես որ, ձեր բոլոր բացասական խոս-

քերը դժոխային գործունեության պատճառ են դառնում: Ահա թե ինչու Աստված խոսեց Հեսուի հետ (Հեսու 1.8)՝ ասելով.

«Այս օրենքի գիրքը քո բերանից չհեռանա, այլ գիշեր և ցերեկ նրա վրա մտածես, որ պահես և կատարես ամբողջ նրա միջի գրվածի պես, որովհետև այն ժամանակ ճանապարհները հաջողակ կանես և այն ժամանակ խելամուտ կլինես»:

Այս փոքրիկ խոսքը Հեսուի գրքում՝ բարգավաճման և հաջողության բանալին է: Աստծո Խոսքը խոսելը կարող է հաջողակ դարձնել ձեզ կյանքի ամեն բնագավառում:

Իսկ ի՞նչ անել այն խոսքերի հետ, որոնք ասվում են մեր և մեր սիրելիների դեմ: Հնարավո՞ր է, որ դժոխքը գործի մեր դեմ այդ բացասական դավանությունների պատճառով: Ինչպես միշտ, Աստծո Խոսքը պատասխան ունի: Այն գրված է Եսայի 54.17-ում.

«Բոլոր քեզ դեմ շինած գործիքը չպիտի հաջողվի, և ամեն լեզու, որ վեր կենա քեզ դեմ դատաստանի, պիտի դատապարտվի: Սա է Տիրոջ ծառաների ժառանգությունը, և նրանց արդարությունն Ինձնից է»:

Դատապարտե՛ք ձեր և ձեր մտերիմների դեմ ասված սխալ խոսքերը Հիսուսի անունով: Երբեք մի՛ դատապարտեք այն մարդուն, ով ասում է դրանք. դատապարտեք միայն ձեր դեմ ասված խոսքերը:

Այդ դեպքում, այդ զենքերը՝ բացասական խոսքերը, չեն վնասի ձեզ:

Պարտությա՛ն մատնեք թշնամուն այսօր: Խոսեք ստորև բերված Կյանքի խոսքերն ամեն օր: Դժվարին ժամանակներում խոսեք դրանք օրը երեք անգամ: Աստծո Խոսքը գործում է: Փորձեք դա. ձեզ դուր կգա Խոսքը դավանելը: Երբ բարձրաձայն եք խոսում, ձեր հոգևոր մարդը լսում է ձեր ասածը: Արդյունավետ դարձրեք ձեր հավատքը: Խոսեք Խոսքը, խոսեք Խոսքը, խոսեք Խոսքը:

«Թող հաճո լինեն Քեզ իմ բերանի խոսքերը, ո՛վ Տեր»:

ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Ես օծություն ունեմ Սուրբից և գիտեմ ամեն բան: Այսօր Հիսուսն իմաստություն, արդարություն, սրբություն և փրկություն է ինձ համար, որովհետև ես ունեմ Քրիստոսի միտքը: Ես կառուցում եմ իմ տունն իմաստությամբ և հաստատում եմ հանճարով (Ա Հովհ. 2.20, Ա Կորնթ. 1.30, Ա Կորնթ. 2.16, Հակոբ. 3.17, Առակ. 24.3):

Այսօր Աստծո իմաստությունը հաղթանակ կտա ինձ, որովհետև Աստծո իմաստությունն ի վերուստ է: Խոսելով Նրա իմաստության խոսքերը՝ ես խաղաղություն և ողորմություն կբերեմ իմ կյանքի իրավիճակներում: Այսօր ես չեմ քայլի խավարում, որով-

հետև Սուրբ Հոգին կառաջնորդի ինձ ամեն ճշմարտության մեջ: Տերը կտա ինձ հասկացողություն ամեն բանում: Իմաստությունը և գիտելիքը կհաստատեն իմ ժամանակները, որովհետև ես ունեմ Քրիստոսի միտքը (Հակոբ. 3.17, Հովհ. 16.13, Ա Կորնթ. 1.30, Բ Տիմոթ. 2.7, Եսայի 33.6, Ա Կորնթ. 2.16):

Սատանան չի կարող հաղթել ինձ, քանի որ Աստված բերան և իմաստություն է տվել ինձ, որին թշնամին չի կարող հակառակ խոսել և ընդդիմանալ (Ղուկ. 21.15):

Ես չեմ քայլում խավարում, որովհետև ինձ տրված է Երկնքի արքայության խորհուրդները գիտենալը: Տերն իմաստուն է անում ինձ և սովորեցնում է այն ճանապարհը, որով պետք է գնամ: Նրա աչքն ինձ վրա է (Մատթ. 13.11, Հռոմ. 1.19, Սաղմ. 32.8):

Այսօր ես համոզված եմ, որ լցված եմ բարությամբ, ամեն գիտելիքով և կարողությամբ՝ իմ եղբայրներին օգնելու համար: Ես հաճելի եմ Աստծո առջև, և Նա տալիս է ինձ իմաստություն, գիտելիք և ուրախություն (Հռոմ. 15.14, Ժողով. 2.26):

Ես լցված եմ Տիրոջ կամքի գիտությամբ, ամեն իմաստությամբ և հոգևոր հանճարով: Ես նոր ստեղծված եմ Քրիստոսում: Ես Նրա գործակիցն եմ՝ ստեղծված Հիսուս Քրիստոսում: Այս պատճառով, ես ունեմ Նրա իմաստությունը, և իմ որոշումներն առաջնորդվում են Նրանով (Կողոս. 1.9, Բ Կորնթ. 5.17, Ա Կորնթ. 2.16, Եփես. 2.10):

Աստված՝ իմ Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, տալիս է ինձ իմաստության և հայտնության Հոգին, և իմ աչքերը լուսավորվում են, որ իմանամ Նրա ժառանգության փառավոր մեծությունն ինձանում և Նրա զորության գերազանց մեծությունը, որը հոսում է ինձանով (Եփես. 1.17-19):

ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ

Այսօր ես ուրախ կլինեմ, որովհետև կխոսեմ խոսքեր, որոնք կյանք են բերում ինձ և այլ մարդկանց: Տիրոջ ուրախությունը՝ իմ կյանքի զորությունն է. այնպես որ, ես կարող եմ անել ամեն ինչ Քրիստոսով, Ով զորացնում է ինձ (Առակ. 15.23, Առակ. 25.11, Նեեմիա 8.10, Փիլիպ. 4.13):

Այսօր իմ բերանից դուրս չի գա ոչ մի տգեղ խոսք, որովհետև ես խոսում եմ հավատքով լի և անձը կառուցող խոսքեր: Այնպես որ, իմ խոսքերը կյանք և ուրախություն են բերում (Եփես. 4.29):

Ես ուրախություն կունենամ իմ բերանի հարմար պատասխաններով. այնպես որ, այսօր ես զորությամբ լի խոսքեր կխոսեմ: Այսօր ես կմտնեմ Տիրոջ ուրախության մեջ և կլինեմ մարդկանց ուրախության գործընկերը: Ես հավատքի խոսքեր կասեմ մարդկանց (Առակ. 15.23, Մատթ. 25.23, Բ Կորնթ. 1.24):

Ես սիրում եմ արդարությունը և ատում եմ անօրինությունը. այդ պատճառով Աստված՝ իմ Աստվածը,

օծել է ինձ ուրախության յուղով ավելի, քան իմ ընկերներին: Ես կհուսամ Տիրոջը և կուրախանամ: Ես կգոչեմ ուրախությունից, որովհետև Նա պաշտպանում է ինձ: Ես սիրում եմ Նրա անունը և զվարճանում եմ Նրանով (Եբր. 1.9, Սաղմ. 5.11):

Իմ սիրտը ցնծում է Նրանով, որովհետև ես վստահում եմ Նրա սուրբ անվանը: Ես ուրախությամբ կուրախանամ Տիրոջով, իմ անձը կխնդա իմ Աստծով, որովհետև Նա փրկության հանդերձներ հագցրեց ինձ, և արդարության պատմուճանը գցեց ինձ վրա: Քո Խոսքն ինձ համար ուրախություն և սրտի ցնծություն եղավ, որովհետև Քո անունը կանչված է ինձ վրա, ո՛վ Տեր, Զորքերի Աստված (Եսայի 61.10, Երեմիա 15.16):

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ

Տերն ուղարկեց Իր Խոսքը և բժշկեց ինձ և ազատեց ինձ իմ կորստից: Ես ծառայում և պաշտում եմ Տիրոջը, և Նա օրհնում է իմ հացը և ջուրը և հեռացնում է տկարությունն ինձնից և իմ ընտանիքից: Նա բժշկում է մեր բոլոր ցավերը և հիվանդությունները (Սաղմ. 107.20, Ելից 23.25, Սաղմ. 103.3բ):

Հիսուսին մեռելներից հարություն Տվողի Հոգին բնակվում է ինձանում. այնպես որ, Քրիստոսին մեռելներից հարություն Տվողը կենդանացրել է իմ մահկանացու մարմինը՝ դարձնելով այն անընկալունակ բոլոր հիվանդությունների և տկարությունների հանդեպ (Հռոմ. 8.11):

Իմ բոլոր կարիքները լրացված են Քրիստոս Հիսուսով, որովհետև իմ Աստված հոգում է իմ բոլոր կարիքներն Իր հարստության չափով՝ փառքով: Քրիստոսը գնեց ինձ աղքատության, հիվանդության և հոգևոր մահվան անեծքից, և քանի որ ես Աբրահամի սերունդն եմ, Նա օրհնելով կօրհնի և շատացնելով կշատացնի ինձ: Այսօր ես ստանում եմ Աստծո առատությունն ինձանում (Փիլիպ. 4.19, Գաղատ. 3.13, Եբր. 6.14):

Ես տալիս եմ, և ինձ տրվում է՝ լավ չափով, թափ տրված, շարժված և լիփ-լիքը (Ղուկ. 6.38):

Այսօր ես ցնծում եմ այն ամենի մեջ, ինչին իմ ձեռքը դիպչում է: Նա օրհնում է իմ ձեռքի գործը: Ես ուրախ եմ, և իմ կյանքում ամեն ինչ լավ է: Իմ ընտանիքի կարիքները առատությամբ լրացված են Նրա միջոցով, Ով հոգում է իմ բոլոր կարիքները (Սաղմ. 128.1,2, Երկր. Օր. 12.7,18բ):

Ապրանք և հարստություն կլինի իմ տանը, և իմ արդարությունը կմնա հավիտյան (Սաղմ. 112.3):

ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՎԱԽԻՑ

Այսօր ես և իմ սիրելիներն ապահովության մեջ ենք, որովհետև չկա իմաստություն, չկա հանճար և չկա ոչ մի խորհուրդ Տիրոջ դեմ (Առակ. 21.30):

Ես լսում եմ Տիրոջ ձայնը՝ Նրա Խոսքի միջոցով: Այդ իսկ պատճառով, ես ապահով բնակվում եմ և հանդարտ եմ չարիքի վախից (Առակ. 21.30):

Իմ սիրելիները և ես փրկված ենք խավարի իշխանությունից և փոխադրված ենք Նրա սիրելի Որդու արքայության մեջ: Ոչ մի չար բան չի հասնի, և ոչ մի նեղություն չի մոտենա իմ բնակարանին: Ես հանգցնում եմ թշնամու կրակոտ նետերը, և ոչինչ չի կարող վնասել ինձ, որովհետև ավելի մեծ է Նա, որ ինձանում է, քան նա, որ աշխարհի մեջ է (Կողոս. 1.13, Սաղմ. 91.10, Եփես. 6.16, Ա Հովհ. 4.4):

Ես հաստատված եմ արդարությամբ: Ես հեռու եմ բռնությունից, որովհետև չեմ վախենում, և արհավիրքից, որովհետև այն չի մոտենա ինձ: Աստված չի տվել ինձ երկչոտության հոգի, այլ՝ զորության, սիրո և զգաստության (Եսայի 54.14, Բ Տիմոթ. 1.7):

Տերը իմ Ապավենն ու իմ Ամրոցն է, իմ Աստված, Ում ես վստահում եմ: Նա իշխանություն է տվել ինձ՝ տրորելու օձերին և կարիճներին և թշնամու ամբողջ զորությունը. այնպես որ, ոչինչ որևէ կերպով չի վնասի ինձ (Սաղմ. 91.2, Ղուկ. 10.19):

ԸՆՏԱՆԻՔ

Աստված իմ առջև է դրել կյանքը և մահը, օրհնությունը և անեծքը, և ես ընտրում եմ կյանքը, որ ապրեմ ես և իմ սերունդը: Ես գիտեմ, որ իմ տունը խաղաղության մեջ կլինի: Ես կայցելեմ իմ բնակարանը և չեմ մեղանչի: Ես գիտեմ, որ իմ սերունդը մեծ կլինի, և իմ զավակները՝ երկրի խոտի պես: Անօրեն-

ները կկործանվեն և կչքանան, բայց իմ տունը կմնա (Երկր. Օր. 30.19, Հոբ 5.24,25, Առակ. 12.7):

Ես հավատում եմ Տեր Հիսուս Քրիստոսին, և փրկված եմ ես և իմ տունը (Գործք 16.31):

Իմ զավակներն իմաստուն են և ուրախացնում են իմ սիրտը: Նրանք Տիրոջից ուսված են, և մեծ է իմ զավակների խաղաղությունը (Առակ. 27.11, Եսայի 54.13):

Ես կրթում եմ իմ զավակին նրա ճանապարհի համեմատ, և ծերացած էլ նա չի հեռանա դրանից (Առակ. 22.6):

Ես սովորեցնում եմ Աստծո Խոսքն իմ զավակներին՝ խոսելով այդ մասին, երբ նստած եմ իմ տանը, երբ ճանապարհ եմ գնում, երբ պառկում եմ, և երբ վեր եմ կենում: Ես պատմում եմ այս մասին իմ զավակներին, և իմ զավակները պատմում են իրենց զավակներին, և նրանց զավակները՝ ուրիշ սերնդի (Երկր. Օր. 11.19, Հովել 1.3):

Իմ որդիները և դուստրերը (ասե՛ք նրանց անունները) չեն մոռանա Աստծո օրենքը և ուսուցումները. նրանց սրտերը կպահեն Նրա պատվերները, որովհետև նրանք երկար օրեր և կենդանության տարիներ և խաղաղություն կշատացնեն իրենց համար: Նրանք չեն թողնի, որ շնորհքն ու ճշմարտությունը հեռանան իրենցից, այլ կկապեն դրանք իրենց պարանոցի վրա և կգրեն իրենց սրտի տախտակներին:

Այսպես նրանք շնորհք և հաճություն կգտնեն Աստծո և մարդկանց առջև (Առակ. 3.1-4):

Դու, Աստվա՛ծ, թույլ չես տա, որ իմ երեխաների ոտքերը սահեն կամ ինչ-որ տեղ գնան, բացի՝ դեպի Քեզ գալուց: Դու պահպանում ես նրանց, և Դու չես քնում (Սաղմ. 121.3):

Տե՛ր, Դու արդար ես: Դու կտրեցիր այն հաստ պարանները (թվարկե՛ք հատուկ մեղքեր), որոնցով անօրեն սատանան ստրկացրեց մեզ (Սաղմ. 129.4):

ԱՆՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՍԵՐ

Ես թույլ եմ տալիս, որ սերն առանց կեղծավորության լինի: Ես ատում եմ չարը և հետևում եմ բարուն (Հռոմ. 12.9):

Եվ սա եմ աղոթում, որ իմ սերն էլ ավելի հարստանա գիտելիքով և ամեն հասկացողությամբ, և որ ճանաչեմ Քրիստոսի սերը, որը գերազանց է ամեն գիտելիքից, և լցվեմ Աստծո ամեն լիությամբ (Փիլիպ. 1.9, Եփես. 3.19):

ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շնորհակա՛լ եմ, Հա՛յր, որ շրջապատում ես ինձ բարեհաճությամբ՝ ինչպես վահանով, և այդ պատճառով ես վայելում եմ իմ ընտանիքի և աշխատակիցների բարեհաճությունը, ինչպես նաև՝ այն մարդկանց, որոնց ես հանդիպում եմ այսօր (Սաղմ. 5.12):

Հայր, գոհանում եմ Քեզնից, որ _____ և ես հաշտված ենք իրար հետ, քանի որ երկուսս էլ հաշտված ենք Հիսուսով՝ Նրա խաչի արյամբ: Սա ճշմարիտ է՝ անկախ այն ամենից, թե ինչպես ենք վարվել մեկս մյուսի հանդեպ անցյալում (Կողոս. 1.20,21):

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այսօր ես աղոթում եմ իմ նախագահի և այլ իշխանավորների համար, որ նրանց սրտերը Տիրոջ ձեռքում լինեն, և Նա դարձնի դրանք՝ ուր որ ցանկանա (Առակ. 21.1):

Մեր ազգը, հովիվները և եկեղեցին օրհնված են, որովհետև մեր Աստված՝ Տերն է, և մենք այն ժողովուրդն ենք, որը Նա ընտրեց՝ որպես ժառանգություն Իր համար (Սաղմ. 33.12):

Քրիստոսի մարմինը և ես՝ Աստծո արդարությունն ենք. այդ իսկ պատճառով, ես բարձրացնում եմ այս ազգը և կապում եմ իշխանություններին, պետություններին, այս աշխարհի խավար աշխարհակալներին և այն չար հոգիներին, որոնք երկնավորների մեջ են, և անարդյունավետ եմ դարձնում նրանց իմ ազգի մեջ, իմ եկեղեցում, իմ ընտանիքում և իմ կյանքում, Հիսուսի անունով (Բ Կորնթ. 5.12, Առակ. 14.34, Եփես. 6.12):

Խոսի՛ր Խոսքը

Սառա Բոուլինգ

Ես շատ վաղուց եմ կիրառում Աստծո Խոսքը խոսելու սկզբունքները: Օրինակ՝ տարրական դասարաններում չէի սիրում բացօթյա սպորտային միջոցառումները, որովհետև ես միշտ ամենաթույլ արդյունքներն ունեի դասարանում: Որպես կանոն՝ ես ստանում էի միայն կանաչ «խրախուսական» ժապավեններ: Այնպես որ, երբ գարունը գալիս էր, իմ վախը բացօթյա սպորտային միջոցառումներից՝ ավելանում էր:

Չորրորդ կամ հինգերորդ դասարանում մայրս և ես որոշեցինք բացօթյա սպորտային միջոցառումների հանդեպ իմ վախը և դժկամությունը փոխել Խոսքը խոսելու միջոցով: Մենք ընտրեցինք մոտավորապես երեք աստվածաշնչյան խոսք հաղթանակի և առաջադիմության մասին: Ես սկսեցի դավանել դրանք ամեն օր, գրեթե երկու շաբաթ՝ մինչև հերթական բացօթյա սպորտային միջոցառումը: Գիտեք, թե ինչ տեղի ունեցավ: Այդ տարի ես առաջին անգամ ստացա իմ առաջին և երկրորդ տեղի ժապավենները և չստացա ոչ մի կանաչ ժապավեն, որը տալիս

էին վերջին տեղերը զբաղեցրած երեխաներին: Այդ պահից ի վեր ես սկսեցի վստահել Աստվածաշնչի խոսքերի զորությանն ավելի, քան իմ զգացմունքներին, մտքերին և աչքիս տեսածին:

Տարիների ընթացքում ես բազմաթիվ աստվածաշնչյան խոսքեր եմ հոչակել իմ կյանքում: Իմ ամենասիրելի խոսքերից մի քանիսը, որոնք առավել մոտ են իմ սրտին, ցույց են տալիս Հիսուսին ճանաչելու կարևորությունը (Փիլիպ. 3.8-10, Ելից 33.11 և Սաղմ. 25.14): Ես նույնպես աշխատում եմ իմ երեխաների հետ, որպեսզի նրանք աստվածաշնչյան խոսքեր խոսեն իրենց կյանքի ամեն օրվա վերաբերյալ: Համաձայն Եսայի 55.11 և Եբրայեցիների 4.12 խոսքերի՝ ես համոզված եմ, որ Աստծո Խոսքը շատ զորավոր և արդյունավետ է:

Այնպես որ, ես խրախուսում եմ ձեզ միշտ ձեռքի տակ պահել այս գրքույկը, որպեսզի ասեք այն, ինչ Աստված է ասում բազմաթիվ իրավիճակներում, ոչ թե պարզապես այն, ինչ դուք մտածում և զգում եք: Այնպես որ, ստորև ներկայացված են մի շարք խոսքեր, որոնք ես դավանել եմ իմ կյանքի տարբեր պահերին և տարբեր իրավիճակներում, ինչպես նաև՝ այլ խոսքեր, որոնք կարող են օգտակար լինել նաև ձեզ համար:

Ես ցանկանում եմ խրախուսել ձեզ, որ այս գրքույկը և սրանում բերված խոսքերը սկիզբ դնեն Աստծո Խոսքի դավանությանը ձեր կյանքում: Կարող եմ

ասել իմ անձնական փորձառությունից, որ իմ կյանքում ամենից շատ զորություն ունեն այն խոսքերը, որոնք խորապես անձնական են դարձել ինձ համար Աստվածաշունչն ուսումնասիրելու արդյունքում:

Ես համոզված եմ, որ Աստված ցանկանում է շատ խորը և անձնական հարաբերություններ ունենալ անհատապես յուրաքանչյուրիս հետ: Ես հայտնաբերել եմ, որ Աստծուն չի կարելի գտնել բանաձևերի և համակարգերի մեջ, այլ՝ փոխհարաբերություններ կառուցելու և փոխվելու մեջ: Այնպես որ, ցանկանում եմ ձեզ ուրախալի որոնումներ, ուրախալի հավատք և Աստծո հետ անձնական ուրախալի խորը հարաբերություններ:

ՆՊԱՏԱԿ

«Եվ մեր Տեր Աստծո վայելչությունը լինի մեզ վրա: Եվ մեր ձեռքի գործերը հաստատի՛ր մեզանում, և մեր ձեռքի գործը հաստատի՛ր» (Սաղմ. 90.17):

«Որովհետև Աստված է, որ ներգործում է ձեզանում՝ կամենալն էլ, անելն էլ՝ Իր հաճության պես» (Փիլիպ. 2.13):

ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱԽ

«Քո հոգսն Աստծո վրա գցի՛ր, և Նա խնամք կանի քեզ համար: Նա չի թողնի, որ արդարը հավիտյան շարժվի տեղից» (Սաղմ. 55.22):

«Հաստատ միտք ունեցողին Դու կպահես կատարյալ խաղաղության մեջ, որովհետև նա վստահում է Քեզ» (Եսայի 26.3, NASB):

«Մի՛ վախեցեք, կանգնե՛ք և տեսե՛ք Տիրոջ փրկությունը, որ այսօր կանի ձեզ համար» (Ելից 14.13):

«Իմ աչքերը միշտ դեպի Տերն են, որովհետև Նա կհանի իմ ոտքերը որոգայթից» (Սաղմ. 25.15):

ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ ԱՍՏԾՈ ՀԵՏ

«Որ Քրիստոսը հավատքով բնակվի ձեր սրտերում, և դուք սիրով արմատ գցած և հաստատված լինեք: Որ բոլոր սրբերի հետ իմանաք, թե ինչ է լայնությունը և երկարությունը և բարձրությունը և խորությունը: Որ ճանաչեք Քրիստոսի սերը, որ ամեն գիտությունից գերազանց է, որ Աստծո ամեն լիությամբ լցվեք» (Եփես. 3.17-19):

«Իմաստության սկիզբը՝ Տիրոջ երկյուղն է, և Ամենասուրբին ճանաչելը՝ հանճար» (Առակ. 9.10):

«Որովհետև դուք ծառայության հոգին չառաք, որ դարձյալ վախենաք, այլ որդեգրության հոգին առաք, որով աղաղակում ենք՝ Աբբա՛, Հա՛յր» (Հռոմ. 8.15):

«Սակայն առաջ Աստծո արքայությունը և Նրա արդարությունը խնդրեք, և այդ ամենը կտրվի ձեզ» (Մատթ. 6.33):

«Եթե Հոգով ենք ապրում, Հոգով վարվենք» (Գաղատ. 5.25):

«Հույսն էլ չի ամաչեցնում, որովհետև Աստծո սերը փռված է մեր սրտերի մեջ Սուրբ Հոգու ձեռքով, որ տրվեց մեզ» (Հռոմ. 5.5):

«Եվ քո Տեր Աստված կթլփատի քո սիրտը և քո որդիների սիրտը, որ ամբողջ սրտովդ և ամբողջ հոգովդ քո Տեր Աստծուն սիրես, որ ապրես» (Երկր. Օր. 30.6):

«Որովհետև հաստատ գիտեմ, որ ո՛չ մահ, ո՛չ կյանք, ո՛չ հրեշտակներ, ո՛չ իշխանություններ, ո՛չ զորություններ, ո՛չ ներկա բաներ, ո՛չ գալու բաներ, և ո՛չ բարձրություն, ո՛չ խորություն, և ո՛չ մեկ ուրիշ ստեղծված բան կարող է մեզ բաժանել Աստծո սիրուց, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսում է» (Հռոմ. 8.38,39):

«Սովորեցնեմ ձեզ Աստծո ձեռքինը. Ամենակարողի մոտ եղածը չեմ ծածկելու» (Հոբ 27.11):

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

«Ո՞վ է այն մարդը, որ վախենում է Տիրոջից: Ահա կսովորեցնի նրան այն ճանապարհը, որ ընտրել է» (Սաղմ. 25.12):

«Իմ ոչխարներն Իմ ձայնը լսում են, և Ես ճանաչում եմ նրանց, և Իմ ետևից գալիս են» (Հովհ. 10.27):

«Եվ քո ականջները լսելու են մի խոսք քո ետևից, որ կասի. «Սա՛ է ճանապարհը, սրանո՛վ գնացեք»,

երբ որ աջ կողմը պետք է գնաք, և երբ որ ձախ կողմը պետք է գնաք» (Եսայի 30.21):

«Իմաստուն կանեմ քեզ և կսովորեցնեմ այն ճանապարհը, որ նրանում պիտի գնաս. կխրատեմ քեզ, Իմ աչքը քեզ վրա կլինի» (Սաղմ. 32.8):

ՎԱՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ

«Իր Խոսքն ուղարկեց և նրանց բժշկեց և նրանց ազատեց իրենց կորստից» (Սաղմ. 107.20):

«Այն օրը, որ կանչեցի Քեզ, պատասխանեցիր ինձ. Դու ինձ զորությամբ ուժովացնում ես իմ անձում» (Սաղմ. 138.3):

«Տեր՛ն է իմ զորությունը և իմ վահանը: Իմ սիրտը Նրան է հուսացել, և Նա ինձ օգնություն եղավ: Իմ սիրտը ցնծում է, և ես իմ օրհնությամբ փառաբանում եմ Նրան» (Սաղմ. 28.7):

ԸՆՏԱՆԻՔ

«Բայց ես և իմ տունը Տիրոջն ենք պաշտելու» (Հեսու 24.15):

«Եվ քո բոլոր որդիները Տիրոջից ուսված պիտի լինեն, և շատ պիտի լինի քո որդիների խաղաղությունը» (Եսայի 54.13):

ՀԱՂԹԱՆԱԿ

«Բայց շնորհակալություն Աստծուն, որ ամեն ժամանակ մեզ հաղթող է անում Քրիստոսում և Իր գիտության հոտը մեզնով հայտնվում է ամեն տեղ» (Բ Կորնթ. 2.14):

«Ոչ մի զենք, որը շինված է քո դեմ, հաջողություն չի ունենա: Եվ ամեն լեզու, որը կմեղադրի քեզ դատաստանում, դու կդատապարտես» (Եսայի 54.17, NASB):

«Որովհետև Դու օրհնում ես արդարին, ո՛վ Տեր, Դու հաճությամբ պատում ես նրան՝ ինչպես վահանով» (Սաղմ. 5.12):

«Բայց այս բոլոր բաներում առավել ևս հաղթում ենք Նրա միջոցով, որ մեզ սիրեց» (Հռոմ. 8.37):

ԱՊՐԻՐ ԽՈՍՔՈՎ
ԲԱՑԱՀԱՅՏԻՐ ՀՐԱՇՔՆԵՐԸ

ԸՆԴՈՒՆԵՔ ՀԻՍՈՒՍԻՆ՝ ՈՐՊԵՍ ՁԵՐ ՓՐԿԻՉ

Աստվածաշունչն ասում է. *«Որովհետև եթե բերանովդ Հիսուսին Տեր դավանես և սրտումդ հավատաս, թե Աստված հարություն տվեց Նրան մեռելներից, կապրես»* (Հռոմ. 10.9):

ԱՂՈԹԵՔ ԱՅՍ ԱՂՈԹՔԸ՝ ՀԻՍՈՒՍԻՆ ՈՐՊԵՍ ՓՐԿԻՉ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Սիրելի՛ Հիսուս, ես հավատում եմ, որ Դու մահացար ինձ համար և հարություն առար: Ես խոստովանում եմ, որ մեղավոր եմ, և ունեմ Քո սիրո և ներման կարիքը: Եկ իմ կյանքի մեջ, ների՛ր իմ մեղքերը և տո՛ւր ինձ հավիտենական կյանք: Ես դավանում եմ Քեզ որպես իմ Տեր: Շնորհակալ եմ իմ փրկության համար: Ամե՛ն:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ. **ԱՄՍԱԹԻՎ.**

ԱՆՈՒՆ _____

ՀԱՍՑԵ _____

ՔԱՂԱՔ _____ **ՇՐՋԱՆ** _____

ՓՈՍՏԱՅԻՆ ԿՈԴ _____ **ԵՐԿԻՐ** _____

ՀԵՌԱԽՈՍ _____

ԷԼ. ՓՈՍՏ _____

ԿԱ՛Պ ՀԱՍՏԱՏԵՔ ՄԵԶ ՀԵՏ...

MARILYN HICKEY MINISTRIES • 8081 E Orchard Road
Greenwood Village, CO 80111
Աղոթքի համար զանգահարեք 1-888-637-4545
անվճար հեռախոսահամարով
կամ այցելեք marilynandsarah.org կայքը

ԱՂՈԹՔԻ ԽՆԴՐԱՆՔՆԵՐ

Եկեք միաբանվենք և հավատքով աղոթենք ձեր կարիք-ների համար:
Լրացրե՛ք ստորև բերված ձևը.

ԱՂՈԹՔԻ ԽՆԴՐԱՆՔՆԵՐ.

_____
_____
_____
_____
_____
_____
_____

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ. **ԱՄՍԱԹԻՎ.**

ԱՆՈՒՆ _____

ՀԱՍՑԵ _____

ՔԱՂԱՔ _____ **ՇՐՋԱՆ** _____

ՓՈՍՏԱՅԻՆ ԿՈԴ _____ **ԵՐԿԻՐ** _____

ՀԵՌԱԽՈՍ _____

ԷԼ. ՓՈՍՏ _____

Ուղարկե՛ք այն մեր հասցեով.

MARILYN HICKEY MINISTRIES
8081 E Orchard Road Greenwood Village, CO 80111

Նույնպես կարող եք զանգահարել 1-888-637-4545
անվճար հեռախոսահամարով
կամ այցելել marilynandsarah.org կայքը

ՄԵՐԻԼԻՆ ՀԻՔԻԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

marilynandsarah.org
savingmoses.org

ԱՊՐԵՔ ԽՈՍՔՈՎ...

ԲԱՑԱՀԱՅՏԵՔ ՀՐԱՇՔՆԵՐԸ



...սա Մերիլինի և Սառայի կոչումն է: *Մերիլին Հիքիի ծառայության* սրտում մարդկանց ֆիզիկական և հոգևոր կարիքներին ծառայելն է...

Փեսան և դուստրը՝ Ռիս և Սառա Բոուլինգները:

- Միսիոներական նախագծեր
- Սովածներին կերակրելու ծրագրեր
- Աջակցություն ծնողազուրկ երեխաներին և անտուն մարդկանց...



Բժշկության ծառայություններ և Ծառայողական դպրոցներ ամբողջ աշխարհով...

- Աստվածաշնչեր
- Քրիստոնեական գրականություն
- Ավելի քան 1.500 ծառայողական նյութեր
- Այցելեք marilynandsarah.org կայքը

- Հեռուստահեռարձակում ամբողջ աշխարհով
- Ինտերնետային կայք
- Աղոթքի հեռախոսային ծառայություն
- Ծառայողական ճանապարհորդություններ

ԱՅՑԵԼԵՔ ՄԵՋ ԱՌՑԱՆՑ

marilynandsarah.org

savingmoses.org

1.Կգոհանամ Քեզնից ամբողջ սրտովս. աստվածների առջև Քեզ սաղմոս կասեմ: 2.Երկրպագություն կանեմ Քո սուրբ տաճարի առջև և կգոհանամ Քո անունից Քո ողորմության համար և Քո ճշմարտության համար, որ ամբողջ անունիցդ բարձր մեծացրիր Քո Խոսքը: 3.Այն օրը, որ կանչեցի Քեզ, պատասխանեցիր ինձ. Դու ինձ զորությամբ ուժովացնում ես իմ անձում: 4.Տեր, երկրի բոլոր թագավորները կգոհանան Քեզնից, որ Քո բերանի խոսքերը [illegible]: 5.Եվ [illegible] ճանապարհներում [illegible] թյունը [illegible]սեն, թե Տիրոջ փառքը մեծ է: [illegible] հետև Տերը բարձր է և տեսնում է ցածը, և Նա [illegible] է [illegible] բարձրամիտին: 7.Թեև [illegible] գնամ, կա[illegible] ինձ. [illegible] ների բարկության վրա Քո ձեռքը կմեկնես և Քո աջը կփրկի ինձ: 8.Տերը կկատարի ինձ տեղ. Տեր, Քո ողորմությունը հավիտյան է. Քո ձեռքի գործերը երեսիցդ մի՛ ձգիր:

«Խոսի՛ր Խոսքը»

ՆՈՐ ԹԱՐՄԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Կյանքում կան ընդամենը մի քանի բաներ, որոնք նույնքան կարևոր են, որքան Աստծո Խոսքն ամեն օր խոսելը: Երբ դավանում եք Նրա խոստումները ձեր կյանքի և հանգամանքների, ձեր կողակցի և երեխաների վերաբերյալ, իրավիճակները *կարող են փոխվել:* Այնուամենայնիվ, մեր զբաղված առօրյայի պատճառով մեզ հաճախ թվում է, թե մենք պարզապես ժամանակ չունենք դրա համար: *«Խոսի՛ր Խոսքը»* կօգնի ձեզ: Այս պարզ և համառոտ գրքույկը կօգնի ձեզ գործադրել այն հոգևոր ուժը, որն արձակվում է Աստծո Խոսքը խոսելիս՝ *սկսած այս պահից:*

1-888-637-4545 • marilynandsarah.org • savingmoses.org
P.O. Box 6598 Englewood, CO 80155-6598
ISBN 978-1-938696-93-0